Արձանագրություն N 4

«ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» հունիսի 2016թ.

ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մովսեսյանը

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ք. Քաբաբյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Ճանապարհ» ՍՊԸ	-	ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Բալահովիտ, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աճառյան 42ա, հեռ. (010) 62-72-40, էլ. փոստ road@road.am
2.	«Շինֆորում» ՍՊԸ	-	ՀՀ, ք. Երևան, Հ/Ա Բ-1 թաղ. 58շ. 54 բն., էլ. փոստ Shinforum@yandex.ru
3.	«Վայքի ՃՇՇ» ՓԲԸ	-	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,Խանջյան 2, էլ. փոստ sisianstoun@mail.ru
4.	«Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))	-	ՀՀ, ք. Երևան, Էստոնական փ. 9 շ., բն. 28, էլ. փոստ norenergy01@gmail.com
5.	«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ	-	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, էլ. փոստ vaykichshsh@mail.ru

բ/ մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			Նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
		Գինն առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ	Ընդհանուր	
Չափաբաժին N 1					
1	«Ճանապարհ» ՍՊԸ	607500000	121500000	729000000	740236700
2	«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ	574879615	114975923	689855538	
Չափաբաժին N 2					
1	«Շինֆորում» ՍՊԸ	309601200	61920240	371521440	381713170
Չափաբաժին N 3					
1	«Վայքի ՃՇՇ» ՓԲԸ	74077500	14815500	88893000	88925490
2	«Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))	72979500	14595900	87575400	

գ/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը ընդհատել և շարունակել 2016թ. հունիսի 09-ին, ժամը 11:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Մովսեսյան

Արձանագրություն N 5
«ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «09» հունիսի 2016թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մովսեսյանը

I. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Ք. Քաբաբյան)

1. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «Ճանապարհ» ՍՊԸ-ի, «Շինֆորում» ՍՊԸ-ի, «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չի համապատասխանում՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի կողմից ներկայացված հայտը, հետևյալ հիմնավորմամբ.

- «Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի անվանման մեջ նշված չի կոնսորցիումի մյուս անդամի անվանումը, ինչը թույլ չի տալիս տեսնել կոնսորցիումի կողմ հանդիսացող մյուս անդամի անվանումը: Մասնակցի հայտում ներառված չի համատեղ գործունեության պայմանագիր, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 6)-րդ ենթակետի ա. պարբերությամբ, սույն ընթացակարգի հրավերի I մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի է. պարբերությամբ, ինչպես նաև հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետով սահմանված պահանջներին: Մասնակցի հայտի գնահատման ժամանակ հնարավոր չէ կիրառել Կարգի 35-րդ կետի 6)-րդ ենթակետի բ. պարբերությամբ և սույն ընթացակարգի հրավերի I մասի 7-րդ կետի 7.5.2 ենթակետի 1)-ին պարբերությամբ սահմանված պահանջները: Մասնակցի հայտի ապահովումը ներկայացվել, ստորագրվել և կնքվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից, իսկ N 3.5 հավելվածում ներառված աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը ներկայացվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի կողմից, մինչդեռ տվյալ հայտարարությունը ստորագրվել և կնքվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Ճանապարհ» ՍՊԸ-ի, «Շինֆորում» ՍՊԸ-ի, «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

բ) «Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Անբավարար» և մերժել, քանի որ չի համապատասխանում հայտերի կազմման և ներկայացման պայմաններին,

3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա) առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.

- «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով,

- «Շինֆորում» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով,

- «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով,

բ) երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ճանապարհ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Մովսեսյան